

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սեկեյ-հունգարական «Ռովաշ» (ռունական) գիրը մարդկության համաշխարհային մշակութային ժառանգության մի մասն է, մի հնամյա քաղաքակրթության մտավոր ստեղծագործության արդյունքը, որ ստեղծվել է Յունգարների և իրենց նախնիների կողմից հնագույն ժամանակներում: Նրա ծագումը, ձևավորումը և հարաբերությունը ուրիշ գրերի հետ մինչև օրս գիտական հետազոտության առարկա է: «Ռովաշ» գրի վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տեսություններ այն ուսումնասիրողների և գործածողների միջև: Այդ բոլոր հետազոտությունները հիմնվում են այն վկայությունների վրա, որ 9-րդ դարում հունգարները լայնորեն գործածում էին «Ռովաշ» գիրը իրենց հաղորդակցման լեզվում, որ նաև թույլ է տալիս ենթադրել, որ այս գիրը գործածվել է մի քանի դար առաջ:

Ինչպես Եվրոպայի մյուս երկրներից շատերում էլ՝ 11-րդ դարում հունգարական թագավորությունում էլ հաղորդակցության պաշտոնական պետական և եկեղեցական լեզուն լատիներենն էր: Այնուամենայնիվ «Ռովաշ» գիրը մինչև օրս գործածվում է հունգարական տարածքներում: Այս լեզուն գործածում էին հասարակ հովիվները, այսպես կոչված Սեկեյ փայտահատները, ինչպես նաև ազնվականները և հոգևորականները: Ավելին՝ մի շարք շրջաններում այն ծառայում էր որպես գաղտնի գրի հիմք: «Ռովաշ» գիրը ոչ միայն դիմակայել է միջին դարերի փորձություններին և հաջորդող պատմական ժամանակաշրջաններին, այլև այդ ամբողջ ընթացքում այն շարունակաբար զարգացել է: Վերջին մի քանի տասնամյակներում, հասնելով աննախադեպ ժողովրդականության, այն նույնիսկ հարմարեցվել է ժամանակների պահանջներին: Այսօր սեկեյ-հունգարական «Ռովաշ» գրով տեքստեր են հայտնվում պարբերական մամուլում և ինտերնետային կայքերում, նաև գործածվում է արվեստի գործերում և արդյունաբերական նախագծերում: Հազարավոր ուսանողներ սովորում են ազգային այս հնագույն գիրը նվիրյալ ուսուցիչների շնորհիվ:

Այս հնագույն արվեստի ձևը գնահատողների և հասկացողների աճող քանակը հասել է հարյուր հազարից ավելիին, որն անհրաժեշտ է դարձնում այս հնագույն լեզվի ժամանակակից կանոնների ստեղծումը: Այդ գործընթացն իր մեջ պարունակում է բնութագրող ձևերի հաջորդականություն, տեխնիկական ստանդարտացում և գրերի արդիականացում, որը մշակված կլինի «Ռովաշ» գիրը գործածողների կողմից, ճիշտ այնպես, ինչպես իրենց նախնիներն էին պահպանում և զարգացնում այս գիրը: Այս գիրքն իրենից ներկայացնում է մի ճանապարհորդություն նվիրված ավանդույթների պահպանմանը: Սեկեյ-հունգարական «Ռովաշ» գիրը գործածող գրողների միությունը հավաքվել է Գյոդոլլո քաղաքում, Յունգարիայում, 2008թ. հոկտեմբերի 4-ին «Կենդանի Ռովաշ» գիտաժողովում, հունգարերեն խոսողների ազգային գիրը համակարգչային դարաշրջանի հասցնելու համար:

Եվրոպական բոլոր կենդանի լեզուներից միայն սեկեյ-հունգարական «Ռովաշ» ձեռագիրը UNICODE ստանդարտի մասը չի կազմում, ինչը նրա գործածումը հնարավոր կդարձնե տեղեկատվական տեխնոլոգիաներում: Հետևաբար սեկեյ-հունգարական «Ռովաշ» գիրը գործածող գրողները միավորվել են խմբերի Դոկտոր Գաբոր Հոսսույի ղեկավարությամբ, և պաշտոնապես ներկայացրել են N3527 ստանդարտի առաջարկը, որը մանրամասնորեն ներկայացվում է գրքում: Ընկերության նպատակն է հնարավորին չափ շուտ ստանդարտներով ընդունել այս հնագույն գիրը: Այս գործն ավարտին հասցնելու համար, սիրելի ընթերցող, Ձեր օգնությունը և աջակցությունն է հարկավոր:

Գրքի հեղինակները գտնում են, որ սեկեյ-հունգարական «Ռովաշ» գիրը նախնիների հիանալի գանձը, մոգական ժառանգությունն է հետագա սերունդների համար, որն իր հետ բերում է նաև այն պատշաճ հարգանքով և խոնարհությամբ այսօրվա պահանջներին համապատասխան ձևափոխած փոխանցելու պարտավորությունը: Սա հատկապես յուրաժամանակ է այսօր, քանի որ հունգարական ազգային գրի հասկացության և պատկերների դիպապագունը այնքան սերտորեն է միահյուսվել հունգարական լեզվի և մշակույթի բոլոր ասպարեզների հետ, որ կարող է հանդիսանալ այն ուղին, որը տանում է դեպի հունգարական մտավոր վերածնունդը: